Կարգապահական գործ թիվ ԿԳ-16058

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2016 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 272-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/187-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐԱ ՋԱՔԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Կարապետ Աղաջանյանի Խորհրդի անդամներ՝ Լիպարիտ Սիմոնյանի, Տիգրան Խուրշուդյանի, Մելանյա Առուստամյանի, Լուսինե Սահակյանի, Սիմոն Բաբայանի, Կարեն Սարդարյանի, Կարեն Մեժլումյանի, Նելլի Հարությունյանի, Մարտուն Փանոսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Արա Ջաքարյանի (արտոնագիր թիվ 314) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. <u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>

Քաղաքացի Վոլոդյա Ավետիսյանը **(այսուհետ նաև՝ Դիմող)** դիմելով Պալատ՝ հայտնել է, որ 2013 թվականի աշնանն իր նկատմամբ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածով:

Դիմողը նշել է, որ 2013 թվականի սեպտեմբեր ամսից նախաքննության և դատաքննության ընթացքում իր շահերը պաշտպանել է փաստաբան Արա Ջաքարյանը **(այսուհետ նաև՝ Պատասխանող)**, որի հետ օրինական կարգով կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր և ամբողջությամբ վճարվել է պահանջված գումարը: Դիմողի և փաստաբանի միջև եղել է պայմանավորվածություն անհրաժեշտության դեպքում դիմելու նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարան (**այսուհետ նաև՝ ՄԻԵԴ**), սակայն, ինչպես դիմողն է նշել, դատարանի դատավճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո փաստաբան Արա Ջաքարյանը մոռացել և բաց է թողել ՄԻԵԴ դիմելու ժամկետը:

Բացի այդ, Վոլոդյա Ավետիսյանի կողմից վերը նշված դիմումի ներկայացմանը նախորդել են փաստաբան Արա Ջաքարյանի վերաբերյալ զանգվածային լրատվամիջոցների մի շարք հրապարակումներ, մասնավորապես՝ CIVILNET.am-ի (որը տեղակայված է նաև www.youtube.com[1] կայքում) «Վոլոդյա Ավետիսյանը պատժելու է «դավաճան» փաստաբանին» վերնագրով, ինչպես նաև www.panorama.am լրատվական կայքում՝ «Փաստաբանի վրիպումը՝ ազատամարտիկ Վոլոդյա Ավետիսյանի գործը ՄԻԵԴ չի ուղարկվել» վերնագրով: www.panorama.am լրատվական կայքում

հրապարակված՝ «Փաստաբանի վրիպումը՝ ազատամարտիկ Վոլոդյա Ավետիսյանի գործը ՄԻԵԴ չի ուղարկվել» նյութում, մասնավորապես նշվել է. «Վոլոդյա Ավետիսյանի փաստաբանը՝ Արա Զաքարյանը շատ գրագետ ու պրոֆեսիոնալ պաշտպանում էր նրան: Նա անձամբ ասում էր, որ այս գործը 99%-ով Եվրոպական դատարանում հաղթած գործ է: Մոտ երկու շաբաթ առաջ ենք անձամբ Արա Զաքարյանից տեղեկացել, որ նա գործը ՄԻԵԴ չի ուղարկել, չնայած որ մինչ այդ նա շեշտում էր, որ գործն արդեն ուղարկված է ՄԻԵԴ, ընդամենը սպասում ենք այնտեղի պատասխանին: Երբ որ այդ պատասխանի ստանալը շատ ձգձգվեց, մենք արդեն տարակուսում էինք, թե ինչու չեն պատասխանում և անգամ պատրաստվում էինք նոր հայց ներկայացնել: Վերջին ամիսների ընթացքում այդպես էլ չէր հաջողվում հանդիպել Արա Զաքարյանի հետ, որպեսզի տեղեկատվություն ստանայինք այդ կապակցությամբ: Եվ երկու շաբաթ առաջ, երբ սպառվեցին այդ ինֆորմացիան երկարաձգելու բոլոր հնարավորությունները, նա պարզապես հայտարարեց, որ գործը ՄԻԵԴ ընդհանրապես չի էլ ուղարկել»,- իրավիճակը ներկայացրեց Գագիկ Սարուխանյանը: «Արա Զաքարյանի նման հմուտ իրավաբանը չէր կարող գործը դնել դարակներում ու ասել վրիպել են: Այնուամենայնիվ, նա էլ մարդ է, որին կարող են խոշտանգել, սպառնալ, ու իշխանությունները օգտագործել են այդ միջոցը: Հստակ չեմ կարող ասել՝ իշխանությունները ճնշումը գործադրել են հատուկ ծառայությունների՞, թե՞ Փաստաբանների պալատի միջոցով: Բայց որ ճնշում եղել է, միանշանակ է», -հավելեց Սարուխանյանը:»:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 23.03.2016թ. թիվ 101-Ա/ԿԳ-16058 որոշմամբ փաստաբան Արա Զաքարյանի (արտոնագիր թիվ 314) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **այսուհետ նաև՝ Օրենք)** 19-րդ հոդվածի 1-ին կետի, Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4 որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 2.1, 2.7.2, 3.1.8 և 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

29.03.2016թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Հունան Բաբայանին:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Դիմողը բացատրություն չի ներկայացրել:

Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացրել թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի և ժամի մասին, գրավոր բացատրություն նույնպես չի ներկայացրել:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>

Պատասխանողը կարգապահական գործի քննության ընթացքում հայտնել է, որ նշված քրեական գործով հանդիսացել է Դիմողի շահերի պաշտպանը, որի հետ օրինական կարգով կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր: Դիմողի և իր միջև եղել է բանավոր համաձայնություն անհրաժեշտության դեպքում դիմելու նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Այդ համաձայնությունը ձեռք է բերվել ՄԻԵԴ դիմելու ժամկետը

ավարտվելուց մոտ երկու ամիս առաջ: Պատասխանողը նշել է, որ Դիմողը ցանկություն է հայտնել դիմել ՄԻԵԴ, Պատասխանողը պարզաբանել է Դիմողին ՄԻԵԴ դիմելու ուժեղ և թույլ կողմերը, և Դիմողն իրեն ասել է, որ ցանկանում է որպեսզի իրենք դիմեն ՄԻԵԴ և իր նկատմամբ կայացված վճիռը բեկանվի: Սակայն, իր մոտ անձնական բնույթի խնդիրներ են առաջ եկել, որի պատճառով ինքը ֆիզիկապես հնարավորություն չի ունեցել բողոքը ավարտել և ներկայացնել: Պատասխանողը հայտնել է, որ բացթողումն իր սխալն է և անկախ պատճառներից, այդ մասին ինքը հայտնել է նաև ԶԼՄ-ով: Պատասխանողը հայտնել է նաև, որ բողոք ներկայացնելու կապակցությամբ իր նկատմամբ որևէ ճնշում, սպառնալիքներ չեն եղել: Պատասխանողը իր բացատրությունում նշել է նաև, որ ամբողջությամբ վերադարձրել է պաշտպանության համար ստացված գումարը:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

30.05.2016թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստողը կազմել է եզրակացություն, որի համաձայն հնարավոր չի եղել պարզել արդյո՞ք Պատասխանողն ունեցել է Դիմողի գործով ՄԻԵԴ գանգատ ներկայացնելու պարտավորություն և այդպիսին չի ներկայացրել:

31.05.2016թ.գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2016 թվականի նոյեմբորի 23-ին, ժամը՝ 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ էական փաստերը՝

- Դիմողի և Պատասխանողի միջև եղել է բանավոր համաձայնություն գանգատ ներկայացնել ՄԻԵԴ:

Նշված փաստը հաստատվում է Դիմողի դիմումով, Պատասխանողի բացատրությունով:

- Պատասխանողը սահմանված ժամկետում ՄԻԵԴ գանգատ չի ներկայացրել.

Նշված փաստը հաստատվում է Դիմողի դիմումով, Պատասխանողի բացատրությունով:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից 23.11.2016թ. տրամադրված N ԸԴՂ/ԿԳ/1127-16 տեղեկանքի համաձայն Արա Զաքարյանը թիվ 314 արտոնագիրը

ստացել է 16.03.1999թ.-ին: Արա Զաքարյանի նկատմամբ 2006-2016թթ ժամանակահատվածում վեց կարգապահական վարույթով կայացվել են որոշումներ՝

- Խորհրդի 26.09.2008թ. թիվ 18/5 որոշմամբ Արա Զաքարյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը (դատական նիստի դահլիճը լքելու հիմքով) կարճվել է:
- Խորհրդի 12.11.2008թ. թիվ 22/11 որոշմամբ Արա Զաքարյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը (դատական նիստի դահլիճը լքելու հիմքով) կարճվել է:
- Խորհրդի 23.12.2011թ. թիվ 29/6 որոշմամբ Արա Զաքարյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը (անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով) կարճվել է:
- Խորհրդի 14.10.2015թ. թիվ ԿԳ/146-Ա որոշմամբ Արա Զաքարյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը (Կանոնագրքի 4.1 կետի հատկանիշներով) կարճվել է:
- Խորհրդի 11.12.2015թ. թիվ ԿԳ/175-Ա որոշմամբ Արա Զաքարյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության (վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունը չկատարելու հիմքով) և վերջինիս նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ նկատողություն, որը մարվել է.
- Խորհրդի 06.05.2016թ. թիվ ԿԳ/70-Ա որոշմամբ Արա Զաքարյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության (վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունը չկատարելու հիմքով) և վերջինիս նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ խիստ նկատողություն, որը չի մարվել.

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան փաստաբան Արա Զաքարյանի նկատմամբ 2016 թվականի մարտի 23-ին հարուցված կարգապահական վարույթի արդյունքում Արա Զաքարյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի, Կանոնագրքի 2.7.2, 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման համար, իսկ Կանոնագրքի 2.1, 3.1.8 ենթակետերի հիմքով հարուցված գործի վարույթը ենթակա է կարճման ներքոհիշյալ պատճառաբանությամբ:

Ա. Կանոնագրքի 2.1 կետի և 3.1.8 ենթակետի մասով.

Դիմողի և ԶԼՄ հաղորդման հիման վրա հարուցված կարգապահական վարույթով պետք էր պարզել, թե արդյոք առկա է եղել՝

- փաստաբան Արա Զաքարյանի նկատմամբ ճնշում և վերջինիս կողմից ճնշման դիմաց՝ իր մասնագիտական պարտականությունները չկատարելու վարքագիծ, ինչպես նաև՝

- ծանրաբեռնվածության կամ այլ պատճառով, ի սկզբանե հանձնարարությունը չընդունելու հիմք:

Կանոնագրքի 2.1 ենթակետի համաձայն *Իր մասնագիտական գործունեությունն իրականացնելիս փաստաբանը պետք է անկախ լինի, այսինքն՝ ազատ ազդեցություններից և, հատկապես, այնպիսի ազդեցություններից, որոնք կարող են ծագել փաստաբանի անձնական հետաքրքրություններից կամ արտաքին ճնշումից և որը կարող է բացասաբար ազդել վստահորդի գործի վրա: Փաստաբանը պետք է խուսափի իր անկախության թուլացումից և ուշադիր լինի իր մասնագիտական չափորոշիչների հանդեպ, որպեսզի նրանք չհարմարեցնի դատարանին կամ երրորդ անձանց գոհացնելու համար: Այս անկախությունը անհրաժեշտ է նաև ոչ վիճելի*

դեպքերում, և դատավարությունների ժամանակ:

Կանոնագրքի 3.1.8 ենթակետի համաձայն *Փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:*

Վարույթի կարգի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:*

Տվյալ դեպքում, դիմող կողմը չի ապացուցել վերոհիշյալ փաստերի առկայությունը, հետևաբար Խորհուրդը չփարատված կասկածները մեկնաբանում է հօգուտ պատասխանողի:

Փաստորեն, սույն կարգապահական գործի շրջանակներում հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը՝ Կանոնագրքի 2.1 կետի և 3.1.8 ենթակետի մասով:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:

Բ. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի, Կանոնագրքի 2.7.2, 3.5.5 ենթակետերի մասով.

Համաձայն Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի *Փաստաբանը պարտավոր է՝ 1) ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով…*:

Համաձայն Կանոնագրքի 2.7.2 կետի Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Համաձայն Կանոնագրքի 3.5.5 կետի *Փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից:*

Հետևաբար, սույն կարգապահական գործի շրջանակներում անհրաժեշտ է պարզել.

արդյո՞ք Պատասխանողը բարեխիղճ իրավական օգնություն է ցույց տվել իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ազնվորեն և բարեխղճորեն է պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը,

արդյո՞ք Պատասխանողը ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ է տվել և պաշտպանել է իր վստահորդին և հանդես եկել է նրա անունից:

Պատասխանելով նշված հարցերին Պալատի Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողը թույլ է տվել Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի, Կանոնագրքի 2.7.2, 3.5.5 ենթակետերի խախտում, քանի որ սույն կարգապահական գործի քննության արդյունքում հաստատվել է, որ Դիմողի և Պատասխանողի միջև եղել է բանավոր համաձայնություն գանգատ ներկայացնել ՄԻԵԴ, սակայն Պատասխանողը

սահմանված ժամկետում ՄԻԵԴ գանգատ չի ներկայացրել: Նշված փաստերն ընդունել է Պատասխանողը:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Օրենքի 39.9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ*:

Պալատի խորհուրդը հաշվի առնելով Արա Զաքարյանի անձը, կարգապահական խախտման հետևանքները, մեղքի աստիճանը, ինչպես նաև փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ, հատկապես՝ փաստաբան Արա Զաքարյանի կողմից իր մեղքն ընդունելը, գտնում է, որ փաստաբան Արա Զաքարյանի նկատմամբ պետք է կիրառել նկատողություն տույժի տեսակը:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.- րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, 39.9.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի պահանջներով, Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արա Զաքարյանի (արտոնագիր թիվ 314) նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.1 կետի և 3.1.8 ենթակետի պահանջների խախտման հիմքով հարուցված թիվ 16058 կարգապահական վարույթը կարճել:

2. Փաստաբան Արա Զաքարյանին (արտոնագիր թիվ 314) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման համար:

3. Փաստաբան Արա Զաքարյանի (արտոնագիր թիվ 314) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

4. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող Կարապետ Աղաջանյան